

ՄԻՍՈՒՄՆ ԱՍՏՈՒՄՆ

## ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Իր ակունքներով ժողովրդական ստեղծագործությունն այն ոլորտն է, որից դարերի ընթացքում աստիճանաբար առանձնացել են և ձևավորվել արվեստի և նույնիսկ գիտության տարբեր ճյուղեր: Կարելի է ասել, որ ժողովրդական ստեղծագործությունն ազգային մշակույթի հիմքն է: Որպես ֆոն այն ուղեկցում է պրոֆեսիոնալ արվեստի ամբողջ պատմությանը՝ որոշակիորեն հարաբերակցելով ու փոխներգործության մեջ մտնելով նրա հետ:

Այս համատեքստում Հայաստանի ժողովրդական դեկորատիվ-կիրառական արվեստի բնորոշ հատկանիշը անհամատեղությունն է, նրա բազմաշերտայնությունը: Նշելով դա, նկատի ունենք նրա մեջ գոյակցող տարաբնույթ երևույթները՝ թե՛ հին, որոնց արմատները կորչում են նախապատմական անցյալում, թե՛ նոր, որոնց սկիզբը նշմարվում է պատմության որոշակի հատվածում, թե՛ ժամանակակից, որն ի հայտ է եկել ուղղակի մեր աչքի առաջ: Անշուշտ, այս ճյուղերից յուրաքանչյուրը պահանջում է առանձին վերլուծություն, գնահատման չափանիշների հատուկ սանդղակ, ուրույն մոտեցում, քանի որ դրանցից ամեն մեկը կենդանի մարդու անհատական մոտեցման ու երևակայության արդյունք է:

Ընդհանուր այս դրույթների շրջանակներում փորձելու ենք ակնարկային ձևով անդրադառնալ XIX դ. 2-րդ կեսի և XX դ. սկզբի հայկական դեկորատիվ-կիրառական արվեստների զարգացման և ուսումնասիրման մի քանի դրվագների՝ կապված Եկեղեցու հովանավորող դերի հետ:

Ազգային պետականություն չունեցող երկրում ժողովրդական արվեստները զարգանում են կա՛մ հեղինակավոր անհատականությունների ու Եկեղեցու հովանավորությամբ և կա՛մ, մասնակիորեն, ստեղծագործող հմուտ վարպետների մասնաձեռնությամբ: Գրեթե մնան կացություն է եղել Եվրոպայում և Ռուսաստանում, միայն թե դրանցում խոշոր անհատականություններն ու պետական ամուր կառուցվածքը ավելի որոշակի դեր են կատարել, քան Եկեղեցին: Մեզ մոտ՝ հակառակը:

XIX դ. կեսերից սկսած թե՛ Եվրոպայում և թե՛ Ռուսաստանում մեծացավ հետաքրքրությունը ժողովրդական դեկորատիվ-կիրառական արվեստների նկատմամբ: Դա ոչ թե որպես սպասման ոլորտի ապահովման համար, այլ՝ ավելի շատ ժողովրդական արվեստների ավադույթների պահպանման միտումով: Առաջադիմող առևտրա-շուկայական հարաբերությունները, քաղաքային գեղարվեստական (ֆաբրիկային) արտադրությունը («շիրպատրեք») խիստ բացասաբար է անդրադառնում ժողովրդական դեկորատիվ-կիրառական արվեստների զարգացման վրա՝ սահմանափակելով դրանց կիրառության ոլորտը: Վիճակը շտկելու համար արվեստասեր մտավորականությունը գործնական քայլեր է կատարում ի նպաստ ժողովրդական արվեստների ծավալման, որպեսզի այն կարողանա դի-

մակայել արդյունաբերական արտադրանքին: Այդ ուղղությամբ նկատելի աշխատանքներ կատարվեցին Ռուսաստանում, որի մշակութային ոլորտում էր գտնվում նաև Հայաստանը: Ըստ էության, հիմք է դրվում արվեստաբան մտավորականության և նկարիչ-արվեստագետների և ժողովրդական վարպետների համագործակցությամբ<sup>1</sup>:

1880-ական թվականներին նկարչուհի Ե. Պոլեմովան Մամոնտովների «Աբրամցովո» կալվածքում կազմակերպում ու ղեկավարում է տեղական հյուսն վարպետների աշխատանքը: Ծուռով զգացվում են այդ նախաձեռնության արդյունքները: Մոսկվայում հատուկ խանութ է բացվում «Աբրամցովոյի» իրերը վաճառելու համար: Փաստորեն ստեղծվել էր դպրոցի նման մի բան, ուր գյուղացի երեխաները սովորում էին շուրջ երեք տարի՝ հմտանալով փայտի գեղարվեստական փորագրման արվեստում:

Միջնադարյան արվեստի խոշոր գիտակ Ե. Պոկրովսկին, ոգևորված այդ ձեռնարկումով, 1902 թ. մի գրքով է հրատարակում Վոլգայի ափին գտնվող Կոստրոմայի նահանգի Կրասնոյե գյուղի ոսկերչական արհեստանոցի մասին<sup>2</sup>: Նա հույս է հայտնում, որ գիտնական-արվեստագետների հոգածությամբ ժողովրդական արհեստագործությունը կարող է մեծ հաջողությունների հասնել: Նմանօրինակ աշխատանքներ կատարվեցին նաև Պալեխում<sup>3</sup>:

Տեսական ու գործնական աշխատանքների այդօրինակ մթնոլորտում էր ընթանում ժողովրդական արվեստով զբաղվողների գործունեությունը Ռուսաստանում<sup>4</sup>:

Այժմ տեսնենք, թե այդ և հետագա ժամանակաշրջանում ղեկորատիվ-կիրառական արվեստների զարգացման ուղղությամբ ինչ է կատարվել Հայաստանում:

Մեզանում ազգանպաստ այդ գործի գլուխը կանգնեցին Հայ Եկեղեցին և մի քանի նշանավոր հոգևորականներ: Վերջիններիցս առաջին հերթին պետք է հիշատակել հայ հոգևոր և մշակութային խոշոր գործիչ, մանկավարժ, հայագետ, Մայր Աթոռի միաբան, սպա և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանին: Դեռևս 1897 թ. Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դասախոս 30-ամյա Գարեգին Հովսեփյանը վեճախառ Հայրապետի խորհրդով ուսանողների հետ շրջագայում է Սևանի և Նոր Բայազետի շրջաններում փնտրելով ու ցուցակագրելով եկեղեցիներում և մասնավոր տներում պահպանվող ղեկորատիվ-կիրառական արվեստի նմուշները: Նորադուր գյուղում նրանք ձեռք են բերում XVII դ. մի գրեթե, որն իբրև «անպետք և հնացած վարագույր ձգվել էր եկեղեցու կողքի զգեստանոցը և այն փոխարինվել չթե վարագույրով»<sup>5</sup>: Բացի ժողովրդական ղեկորատիվ-կիրառական արվեստների նմուշների հավաքումից (կորստից փրկելուց), Գարեգին Հովսեփյանն առաջին հայ գիտնականն էր, որը խորապես ուսումնասիրեց ժողովրդական արվեստի այդ ընտիր նմուշները<sup>6</sup>:

<sup>1</sup> С. И. Масленицын, Положительный опыт работы художника - профессионала с мастерами народных промыслов, М., 1982, с. 82.

<sup>2</sup> Н. Покровский, Кустары - ювелиры Костромской губернии, СПб. 1902:

<sup>3</sup> А. В. Вакушнянский, Искусство Палеха, М. - Л., 1934: Ц. А. Некрасова, Искусство Палеха, М., 1966:

<sup>4</sup> Այդ խնդրի շուրջ իրենց մտքերն են արտահայտել նշանավոր արվեստագետներ Վ. Սրատով, Ե. Պոլովցևան, Վ. Վորոնովան և այլք:

<sup>5</sup> «Նաակ», 1945, ԺԱ-ԺԲ:

<sup>6</sup> «Որբան կյուրեր կան, կահ-կարասիքի, անոթների, ասնդնագործության, գորգագործության, կրավելենի և մկրաքսների մշակության մասին ... Ազգի գոյության հիմքը նրա անցյալի գիտակցությունն է, նրա մշակույթը»:-

Առաջին փոքրիկ ուսումնասիրությունը՝ «Հնույթյան նշխարներ» (1909 թ.), Գ. Հովսեփյանը նվիրել է մետաղի գեղարվեստական մշակման նմուշներին - դամպարներ, ճրագներ ու ջահեր: Դրանցից մի քանիսը նա տեսել էր հնագիտական նյութեր հավաքելու ժամանակ և իր ձեռքով բերել էջմիածին<sup>7</sup>:

Պատմագիտական, ձեռագրագիտական ու հնագիտական ծավալուն աշխատանքներին զուգընթաց Գ. Հովսեփյանը պարբերաբար հրատարակում է դեկորատիվ-կիրառական արվեստների մասին գրքեր: «Հայկական եկեղեցական ասեղնագործության նմուշներ» («Հովիտ», 1912), «Սևանի Առաքելոց վանքի հարավային դուռը» («Անահիտ», 1913), «Էջմիածնի Մեծ խորանի ասեղնագործ վարագույրը» («Անահիտ», 1935), «Տարոնի Առաքելոց վանքի դուռը» («Զվարթնոց», 1937), «Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից» («Տաթև», 1930), «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» (1935-1951) և այլն:

Հայկական ժողովրդական արվեստի վիճակը և նրա ուսուցման խնդիրները մեծապես մտահոգել է Գալուստ Տեր-Մկրտչյանին (Միաբան), որը տարբեր առիթներով անդրադարձել է այդ թեմային: Նկատենք, որ Հայաստանում առաջին հերթին եկեղեցական մեկենասների ջանքերի ու ճաշակի շնորհիվ ոչ միայն արձանագրվում են եկեղեցական կիրառական արվեստի գործերը՝ խաչեր, բուրվառներ, մասանց տուփեր, սրբերի զանազան մասունքները, այլև դրանց լավագույն նմուշները բերվում Մայր Աթոռ, որոնց փոխարինելու համար նորերն էին պատվիրում ժողովրդական վարպետներին:

Եկեղեցական գույքի (դեկորատիվ-կիրառական արվեստների) հաշվառման և ցուցակագրման առումով հսկայական գործ է կատարել ազգագրագետ Երվանդ Լալայանը: Առաջին հերթին Գարեգին Հովսեփյանի խորհրդով նա մանրամասն նկարագրում է Հայաստանի տարբեր գավառների եկեղեցիներում պահվող սրբությունները, որոնց մի մասը այսօր արդեն անհետ կորել է: Գոնեն միտոսարական է, որ կան Ե. Լալայանի տվյալները, թե դրանք որքան են եղել իր շրջագայության օրերին: Այսպես, օրինակ, Սևանի Առաքելոց եկեղեցում Ե. Լալայանը ցուցակագրել է բոլոր սրբությունները, առաջին հերթին՝ «Սուրբ Նշան» անվանվող խաչը: Համաձայն ավանդության, այդ խաչում եղել է մի մասունք այն կոնքի կտորից, որի մեջ Աստվածածինը լողացրել է մանուկ Հիսուսին: Թաղեսու առաքյալը այդ կոնքից «առանց գործիքի» երեք խաչ է պատրաստել, որոնցից մեկը հենց դա է<sup>8</sup>:

Բացի նշված «Սուրբ նշանը», Ե. Լալայանն այստեղ նշել է արծաթե, ոսկեգօծ մի խաչ՝ կենաց փայտի մի կտորով: Մի այլ արծաթե մեծ խաչ, որը դրվել է բեմի վրա, պատրաստել են Չիթախյանց արհեստավոր եղբայրները 1656 թվականին: Բացի դրանից, եկեղեցում

գրում է Գ. Հովսեփյանը (Գարեգին Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, Ա, Երևան, 1988, էջ 20):

<sup>7</sup> «Նագիփական ամեն մի ճանապարհորդությունից հետո, - գրում է Գ. Հովսեփյանը, - գլխիս մեջ թափով զարթնում է այն փանջող միտքը, թե մեր նախնյաց սրբնագործական հանճարի կենդանի հուշարձանները՝ վանքեր, խաչքարեր, քանդակներ ու արձանագործություններ, որ նրկար դարերի ընթացքում դիմացկն են ժամանակի ավերիչ փորձերի դեմ և անբարբառ վկաներ հանդիսացել մեր անցյալի փառքի... այժմ խորհրդավոր, փոշիանում են մարդկային բարբարոս ձեռքերից» («Հովիտ», 1912, N 43):

<sup>8</sup> Ս. Թառայան, Հայ ժողովրդի արհեստագործությունը, «Ազգագրական հանդես», Գ, 1998, էջ 17:

եղել են մի քանի տասնյակ փոքրիկ խաչեր: Դրանցից երկուսը փայտից՝ նուրբ քանդակներով և եզերքն արծաթով պատած:

Բացի վերոհիշյալ խաչերից, այս եկեղեցուն պահվել են չորս արծաթե մետոնատուսի, մի գույզ արծաթե քշոց, մեկ արծաթե խաչվառ, եկեղեցական զգեստներ, թագ, եմփիրոն, սաղավարտներ և այլն<sup>9</sup>: Ս. Թատայանը երկար տարիներ հետևողականորեն ուսումնասիրելով Հայաստանում արհեստավորների աշխատանքային պայմաններն ու սոցիալական վիճակը, գրում է, որ աշխատավոր հայ ընտանիքներում մեծ մասամբ ընտանիքի մի անդամը զբաղվել է արհեստագործությամբ:

Ըստ Թատայանի, Հայաստանում կային արհեստավորների հետևյալ խմբերը.

ա. Տեղից տեղ գնացող արհեստավորներ. նրանք շրջում էին տնից տուն և յուրաքանչյուրի համար կարճ ժամանակամիջոցում կատարում պահանջված գործը:

բ. Արհեստավորներ, ովքեր պատրաստում էին դժվար տեղափոխվող առարկաներ և աշխատանքը ավարտելուց հետո միացյալ ուժերով տանում իր տեղը:

գ. Առանձին խումբ էին կազմում դեկորատիվ-կիրառական արվեստի մանր առարկաներ պատրաստողները, ովքեր իրենց գործերը վաճառում էին քաղաքային շուկաներում: Այս խմբից մետաղի և՛ փայտի գեղարվեստական փորագրության առավել հմուտ վարպետները կատարում էին եկեղեցական պաշտամունքային բնույթի առարկաների պատրաստումը:

Եկեղեցու դերը, որպես ժողովրդական-դեկորատիվ արվեստների ոլորտի կազմակերպչի և հովանավորի, առավել զգալի է եղել Արևմտյան Հայաստանի քաղաքներում ու շրջաններում, որոնք գտնվում էին օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ, և, բնականաբար, հայ ժողովրդի սոցիալական վիճակի, մշակույթի և արհեստագործության զլխավոր հովանավորողը հանդիսացել է Կ. Պոլսի հայոց Պատրիարքությունը:

Պատրիարքության ետանդուն գործունեության շնորհիվ ժողովրդական արհեստներով զբաղվող երիտասարդ կադրեր են պատրաստվում վաճառ, Կարինում, Ջմյունհայում, Երզնկայում... Կ. Պոլսի մամուլը 1860-70-ական թվականներին հիացմունքով է խոսում արքունի ատաղձագործ Որդիկ Քեմհանյանի աշխատանքների մասին: Կայսերական պալատի համար նա մեկ տարվա ընթացքում պատրաստում է երկու զարդասեղան. «Դրանց (փայտի) վրա քանդակված են վայրի կենդանիներ, թռչուններ, լեռներ ու դաշտեր, ամեն ինչ այնքան բնական ու կենդանի, որ եթե որևէ պակասություն կար, դա այն էր, որ վարպետ հեղինակը իր ստեղծած կենդանիներին ու բնության պատկերներին չէր կարողացել իսկական շունչ տալ»<sup>10</sup>:

XIX դ. 70-ական թվականներին թեմակալ առաջնորդները համայնքների ղեկավարության հետ լայն գործունեություն են ծավալում՝ բարձր հիմքերի վրա դնելու հայկական արհեստագործությունն ու ժողովրդական դեկորատիվ արվեստների կազմակերպումը: Այս-

<sup>9</sup> Սևդրակ Թատայանը «Հայ ժողովրդի արհեստագործությունը» հոդվածում կշռում է, որ XIX դ. կրկրորդ կեսին Հայաստանում կային չորսիկ արծաթագործ ոսկերիչներ, որոնք գնում էին քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, գրկում պարվիրարություն և նրանց ճաշակով ու նախասիրությամբ պարրասպում համապարասխան իրեր («Լեզգագրական հանդես», Գ, 1898):

<sup>10</sup> «Արարապ», 18975, էջ 437:

պես, Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանի հատուկ շրջաբերականով 1896-1900-ական թթ. հայկական դպրոցներին ու որբանոցներին կից ստեղծվում են «զեղարվեստական արհեստանոցներ»: Հստ այդմ, օրինակ, Սեբաստիայի հայ մանկանց որբանոցի երեխաները, ի թիվս հանրակրթական առարկաների, հմտանում են փայտի զարդափորագրման արվեստում: Դեկորատիվ բնույթի տարբեր առարկաներից գատ ճրանք իրենց շնորհիքը գործադրում են պատրաստվող կիրառական առարկաների վրա՝ հատուկ թիկնաթոռներն ու սեղանիկները պատելով ճրքակերտ ու վայելչաձև քանդակներով, որոնք մասամբ կրում են արևելյան ճաշակի պերճությունը<sup>11</sup>:

Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանի մեկ այլ շրջաբերականով Երզնկայի որբանոցի երեխաները հմտանում են գորգագործության և ձեռագործի մեջ, իսկ Վանի և Մալաթիայի որբանոցներում, որպես հիմնական մասնագիտություն, սովորեցնում են արծաթագործությունը: Ուսումնական այդ արհեստանոցներում, մասնագիտական բարձր որակ ապահովելու համար, որպես ուսուցիչ հրավիրում են մասնագիտական համապատասխան կրթություն ստացած արվեստագետներ: Ուսման տևողությունը ամենաքիչը երեք տարի էր: Արհեստ սովորող երեխաներին խրախուսելու համար 1898 թվականին Կ. Պոլսի Պատրիարքարանում կազմակերպվում է հայկական դպրոցների ու որբանոցների երեխաների պատրաստած զեղարվեստական աշխատանքների ցուցահանդես:

Մի հետաքրքիր փաստ ևս: Տարիներ անց, երբ հայկական որբանոցների գործելու ժամկետները լրանում են (Արևմտյան Հայաստանում դարավերջին գործում էին 34 որբանոցներ), հոգևոր Առաջնորդարանները և համայնքների ղեկավարները հրահանգում են, որպեսզի զավառական գլխավոր կենտրոններում ժամկետը լրացած որբանոցների փոխարեն բացվեն ժողովրդական դեկորատիվ արվեստի արհեստանոցներ, «...որպեսզի ցիր ու ցան չվտարել ու իրենց բախտին չլքանել այս մատաղատի մանկտին ... Որք և կարոտ մանուկներին իսպառ անխնամ չթողնելու համար»<sup>12</sup>: Այդ նպատակով մշակվում է հատուկ կանոնադրություն, ուր մասնավորապես նշվում է.

հոդվ. 1 - Գավառական առժամանակյա անց որբանոցներու տևողության պայմանաժամն լրանալով՝ տակավին անչափահաս գտնվող որք և կարոտ մանուկներն իսպառ անխնամ չթողլու համար ազգային Պատրիարքարանի կողմն առաջնորդական գլխավոր կենտրոններու մեջ՝ ուր որ հարմար դատվի, երկու սեռի տղոց համար՝ ուրովն արհեստանոցներ պիտի հաստատվին:

հոդվ. 5 - Այս արհեստանոցներու կազմության նպատակն է մասնավորապես որք և անտերունչ մանուկները խնամարկել, և ընդհանրապես՝ թե՛ այս կարգի պատասխարյալներու և թե՛ ուրիշ գավառացի տղայոց ըստ տեղվովն օգտակար արհեստներ և հողագործական կարևոր գիտելիքներ սովորեցնել և միջոց ընձեռնել անոնց, որ անձնական աշխատությամբ հոգան իրենց ապրուստն, և ըլլան բարի և օգտակար ազգին»<sup>13</sup>: Ինչպես տեսնում ենք, Հայ Եկեղեցին և հոգևոր դասը թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Հայաստանում հետևողական ազգանպաստ մեծ գործ էին կատարում մատաղ սերնդի, հատկապես որբերի կյանքի

<sup>11</sup> Նույն տեղում, 1902, N 2, էջ 137:

<sup>12</sup> «Արարար», 1875, N 11, էջ 137:

<sup>13</sup> «Արարար», 1902, էջ 138:

ու ապագայի վիճակը բարելավելու համար:

Այստեղ ինչն է նաև ուշագրավ. բացառիկ ընդունակություններ ունեցող և աշխատանքներ պատանհաններին հոգևոր և ազգային խորհրդի որոշմամբ ուղարկում էին Եվրոպա՝ մասնագիտական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու<sup>14</sup>: Վերը նշված դպրոցներից մեկի շրջանավարտ Հակոբ Դամադյանը մեկնելով Եվրոպա՝ Լոզանցի Ս. Ֆրանչիսկի հրապարակի վրա ձեռք է բերում մեծ ու գեղեցիկ խանութ, ուր վաճառում է իր պատրաստած դեկորատիվ-կիրառական արվեստի իրերը: Ինչպես վկայում են ժամանակակիցները, շնորհաշատ վարպետն այդ առարկաների վրա պատկերում կամ փորագրում էր բնանկարի առանձին տեսարաններ:

«Բազմավեպի» վկայությամբ, եվրոպական մամուլը մեծ հետաքրքրություն է ցուցաբերել Հ. Դամադյանի պատրաստած իրերի հանդեպ՝ առանձին հոդվածներ նվիրելով դրանց («Բազմավեպ», 1908, N 12, էջ 564-566): Ավելին, այս խորհուրդները մտահոգվում էին նաև այն շրջանավարտներով, ովքեր չէին գործուղվում Եվրոպա: Նրանց ամեն կերպ նպաստում էին, նույնիսկ ֆինանսական օգնություն ցույց տալիս՝ իրենց հայրենի բնակավայրերում հիմնելու մասնավոր արհեստանոցներ. «Պետք է ապահովել այնպիսի վիճակ, որ այդ տղաները չմնային անգործ և ցվերջ կարոտ օգնության, այլ կարողանային աշխատել և իրենց ձեռաց վաստակովն հոգավ զիրենք»<sup>15</sup>:

Լինում էր նաև հակասակը, երբ արհեստագործական հաստատություններում սովորած պատանհաններին օգնում էին նաև կրթություն ստանալու: Ահա, նման հայաբնակ մի քանի քաղաքներում պարտադիր էր համարվում տեղական ազգային դպրոցներ հաճախելը:

Նախախորհրդային շրջանի հայ մամուլում հետաքրքրական փաստեր կան արհեստավորական դպրոցների, առանձին խմբերի, նրանց սոցիալական վիճակի ու գործունեության մասին: Ի դեպ, XIX դ. 2-րդ կեսին Ազուլիսում գործել է արհեստավորների շուրջ հարյուր կրպակ, դրանց մի մասը զավագործներ ու ասրագործներ էին<sup>16</sup>:

Վանի՝ XIX դ. վերջի և XX դ. սկզբների ոսկերիչ-արծաթագործների մասին հետաքրքրական տեղեկություններ կան «Գեղարվեստի» 1911 թվականի N 4-ում: «Ոսկերչությունը գեղեցիկ արվեստ է» հոդվածում Հայկ Տևկանցը տեղեկություններ է հաղորդում, որ Վանի արհեստավորները համախմբված էին 90-100 խանութներում: Այստեղ յուրաքանչյուր վարպետ ունեցել է 2-ից 3 աշակերտ: Հոդվածագիրը հաշվել է, որ Վանի արհեստավորները տարեկան միջին հաշվով օգտագործել են 600 կգ արծաթ:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 136:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 136-137:

<sup>16</sup> Դ. Ալիջան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 325: